# *Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն*

«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-ԵԽ-12-Խ» *պայմանագրի էական պայմանների խախտման վերաբերյալ*

*Գյուղ Նոր Խարբերդ 1-ին փող.38 վարչական շենք* *23.04.2026թ.*

2026 թվականին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ ի դեմս գլխավոր քարտուղար Արտակ Մանգասարյանի և «ՊՐԵՍՏԻԺ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի՝ ի դեմս տնօրեն Ս.ԱՁԱՏՅԱՆԻ միջև կնքվել է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-ԵԽ-12-Խ» ծածկագրով պայմանագիրը:

Համաձայն պայմանագրի՝ սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին «ՊՐԵՍՏԻԺ ՖՈՒԴ» -ը պետք է մատակարարի պայմանագրի հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար (տես՝ պայմանագրի առարկան՝ 1.1 կետը):

Վերոնշյալ պայմանագրի շրջանակներում «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից 20.04.2026թ. «ՊՐԵՍՏԻԺ ՖՈՒԴ» ին հայտ է ուղարկվել, համաձայն որի՝ 23.04.2026թ. պետք է իրականացվեր մատակարարում, մասնավորապես՝ ՀԱՎԻ ՄԻՍԸ, սակայն ապրանքը չի մատակարարվել :

*Արձանագրությունը կազմվեց մանկատան*

*ստորաբաժանման ղեկավար՝* ________Գ. Դավթյան

Անդամներ՝ ________Լ. Սարգսյան

________Ռ. Պողոսյան